

Արձանագրություն N1
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն Համայնքի ղեկավարի
26.01.2012 թվականի հաշվետու ժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքի դահլիճում ս/թ-ի հունվարի 26-ին տեղի ունեցավ Վերին Գետաշեն համայնքի ղեկավար՝ Ռուբիկ Կառլենի Ղուկասյանի հաշվետու ժողովը:

Ժողովին մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ պ-րն՝ Ա. Կ. Ղուկասյանը, համայնքի ավագանին և ազգաբնակչությունը:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ռուբիկ Ղուկասյանը:

Քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարտին Մխիթարյանը:

Օրակարգում – Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011 թվականի հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ջեկուցող՝ Ռ. Ղուկասյան

Ջեկուցմամբ հանդես եկող համայնքի ղեկավար՝ Ռ. Ղուկասյանը մանրամասնորեն ներկայացրեց 2011 թվականի հաշվետու ժամանակաշրջանում Վերին Գետաշենի գյուղապետարանի ձեռքբերումները, բացթողումները և կատարած աշխատանքները:

Ջեկույցից հետո եղան հարցեր, ելույթներ, ծավալվեց մտքերի փոխանակություն և միաձայն ընդունվեց համապատասխան

Որոշում

2011 թվականի ընթացքում Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Կից ներկայացվում է համայնքի ղեկավարի զեկույցը:

Ժողովի նախագահ՝

Ռ. Ղուկասյան

Ժողովի քարտուղար՝

Մ. Մխիթարյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի զեկույցը հաշվետու ժողովում

26.01.2012

Հարգելի հյուրեր, հարգելի համագյուղացիներ թույլ տվեք «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ինձ վերապահված լիազորությունների հերթականությամբ Ձեր ուշադրությանը ներկայացնել հաշվետվություն 2011 թվականի հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանի կատարած աշխատանքների վերաբերյալ:

Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 26 աշխատողներից, որից 12-ը՝ համայնքային ծառայող, իսկ 2-ը՝ պատվիրակված լիազորությունների կատարող, 8 աշխատող էլ ունի Վերին Գետաշենի գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մշակույթի կենտրոնը:

Համայնքի ավագանին բաղկացած է 10 հոգուց: 2011 թվականի ընթացքում հրավիրվել և անցկացվել է ավագանու թվով 6 նիստեր և ընդունվել է 18 տարբեր բնույթի որոշումներ, որոնց հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով ընդունված որոշումները փակցվել են տեղեկատվական ցուցանակի վրա բնակչությանը տեսանելի վայրում: Վերը նշված ժամանակահատվածում ընդունվել է նաև համայնքի ղեկավարի 16 որոշումներ, 27 կարգադրություն: Ընդունված բոլոր իրավական փաստաթղթերը նպատակաուղղված են եղել համայնքի 2011 թվականի բյուջեի լիարժեք կատարմանը և ֆինանսական միջոցների նպատակային օգտագործմանը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ազգաբնակչության կողմից ստացվել են բազմաթիվ դիմումներ, որոնք ուսումնասիրվել, քննարկվել և ժամանակին ստացել են համապատասխան լուծումներ:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրվել է 3990.0 հազ. դրամ ֆինանսական օգնություն, գյուղապետարանի կողմից տարբեր գերատեսչություններին և կազմակերպություններին ներկայացնելու համար բնակչությանը տրամադրվել է շուրջ 870 տեղեկանքներ և պաշտոնական գրություններ:

Համայնքի ավագանու կողմից 2011 թվականի համար հաստատվել է տարեկան բյուջե 71737.3 հազ. դրամ, որից ֆոնդային բյուջե՝ 14340.0 հազ. դրամ, սեփական մուտքեր՝ 7867.0 հազ. դրամ, համահարթեցման դոտացիա՝ 62670.3 հազ. դրամ:

Սեփական մուտքերը կատարվել են 167 %-ով, համահարթեցման դոտացիան՝ 100%-ով: 2011 թվականի բյուջեի ծախսային մասը կազմել է 71987.1 հազ. դրամ՝ 100.3%-ով: Այսինքն՝ համայնքի բյուջեի ծախսային մասը կատարվել է մուտքային մասին համապատասխան:

Հարկ է նշել, որ Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմը և համայնքի ոչ առևտրային կազմակերպությունները 100%-ով վճարել են իրենց աշխատողների աշխատավարձը, սոց.հատկացումների վճարները և տարվա կտրվածքով աշխատավարձի պարտքեր չունեն, պարտքեր չունեն նաև գյուղապետարանին սպասարկող կառույցների նկատմամբ, ունենք որոշակի ապառք՝ հողի վարձավճարների գանձման ուղղությամբ, որոնց հավաքագրման համար մշակել ենք անհրաժեշտ միջոցառումներ նշված հարկերը գանձելու և բյուջեի սեփական եկամուտների կատարողականը բարձրացնելու համար: Վերին Գետաշեն համայնքում չեն արձանագրվել հասարակական կարգի խախտման դեպքեր, ինչպես նաև վարչական իրավախախտումներ:

Վերին գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմը ժամանակին և անթերի համագործակցել է մարտունու տարածքային զինկոմիսարիատի հետ՝ գարնանային և աշնանային զորակոչը բարձր մակարդակով անցկացնելու համար, պարբերաբար զբաղվել է Հ/Պ-ի վետերանների, Արցախյան հերոսամարտում զոհված և վիրավոր ազատամարտիկների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հարցերով:

Մայիսի 9-ի՝ հաղթանակի օրվա կապակցությամբ Հ/Պ-ի վետերաններին և Արցախյան հերոսամարտի վիրավոր ազատամարտիկներին շնորհավորելու համար գյուղապետարանի կողմից կազմակերպվել է տոնական միջոցառում , որտեղ թվով 21 վետերաններին հյուրասիրությունից բացի տրվել է նաև դրամական օգնություն:

Վերին Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի ամենօրյա ուշադրության կենտրոնում է գյուղը բարեկարգ դարձնելու համար պահանջվող բոլոր խնդիրներին տալ վերջնական լուծում:

2011 թվականի ընթացքում կատարվել է շուրջ 6կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհների փոսալցում և խճապատում արդյունքում՝ համարյա անանցանելի դարձած ճանապարհները այժմ բարեկարգ վիճակում են, կատարվել են ներհամայնքային փողոցներից ջրահեռացման ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, խնելու ջրագծերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև փողոցների սանմաքրման և աղբահանության աշխատանքներ:

Հողագործությամբ զբաղվող ազգաբնակչությանը օգնելու նպատակով դեռևս վաղ գարնան կանխիկ վճարումով ձեռք է բերվել և բաժանվել է ազոտական պարարտանյութ, բացի դա գյուղում իրականացվում է անասնաբուժական ծառայություն՝ ժամանակին կատարված համապատասխան պատվաստումների շնորհիվ կանխվել են գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների տարածումը:

Գյուղում գործող շուրջ 11 խանութ-տաղավարներին թույլատրվել է կազմակերպելու հասարակական սննդի, ծխախոտի, ոգելից խմիչքների, հեղուկ վառելիքի և այլ տեսակի ապրանքների առևտուր: Գյուղում գործող երկու միջնակարգ դպրոցները, որտեղ սովորում են շուրջ 740 աշակերտներ վերանորոգված են, ունեն լոկալ ջեռուցման համակարգ և համակարգչային սենյակներ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի մշտական ուշադրության կենտրոնում է կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառը, որը հանդիսանում է համայնքի երիտասարդության ճիշտ դաստիարակության հիմնական գործոնը,այդ նպատակով համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքում կա առանձին խաղասենյակ, գրադարան, ինչպես նաև գործում են տարբեր տիպի սպորտային խմբակներ:

Համայնքը ունի «Ալաշկերտ» երգի, պարի ազգագրական համույթ, որն արդեն իսկ ձեռք է բերել բավականին մեծ նվաճումներ:

Ձեկուցող՝

Ռ. Ղուկասյան